214. ԳՐԱԶԸ

Մի մարդ թունդ խմած ժամանակ խանին ասում է.—Խան, ես ամբողջ ծովը կխմեմ։ Խանը ծաղրում է սրան, իսկ մարդը համառում է և ասում.—Արի գրազ գանք, արի գրազ գանք։

Խանը գրազ է գալիս այն պայմանով, որ եթե այդ մարդն ամբողջ ծովը խմի, խանը զրկվի իր հարստությունից՝ հօգուտ այդ մարդու, իսկ եթե ոչ՝ պետք է նրան կախեն։

Առավոտը, երբ այդ մարդու քեֆությունն անցնում է և խելքը գլուխը գալիս ու իր դրած պայմանն իմանում, ահից քար է կտրում։ Սրա կինը տեսնելով իր ամուսնու այդ վիճակը, հարցնում է, և մարդը պատմում է իր գլխին եկածը։

—Վնաս չունի,—ասում է կինը,—ես կգնամ և խանի պատասխանը կտամ։

Երբ խանը հրապարակով կանչում է մարդուն և ասում՝ կամ խմիր ծովը, կամ կախ եմ տալիս, կինն առաջ է գալիս և ասում.

—Խան, իմ մարդն ասել է, որ միայն ծովը կխմեմ, այդպե՞ս է։

—Այդպես է,—պատասխանում է խանը։

—Չի՞ ասել, որ գետերն էլ խմեմ,—հարցնում է կինը։

—Ոչ,—դարձյալ պատասխանում է խանը։

—Ուրեմն, դու պահիր գետերի ընթացքը, որ նրանք ծովը չթափվեն և իմ մարդը կխմի ամբողջ ծովը,—պատասխանում է կինը և հաղթում։